ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Մուշեղ Բաբայան
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ

Ընդհանուր հարցեր: Վերջին տարիներին տեխնիկայի, գիտության, տնտեսության զարգացումը ոչ միայն հանգեցրել է մարդակենտրոն հասարակության ազատականացման, այլև արդիական է դարձրել հասարակական հարաբերությունների մանրակրկիտ կանոնակարգման անհրաժեշտությունը և հասարակական անվտանգության տեսանկյունից նոր տեխնոլոգիաների, մեխանիզմների, կառուցակարգերի ներդրման անխուսափելիությունը: Անվտանգության կառուցակարգերի ներդրումը ենթադրում է հանրային իշխանության որոշակի միջամտություն մարդու մասնավոր կյանքի ոլորտ: Այս հանգամանքն էլ իր հերթին պայմանավորել է մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիության պաշտպանության, երաշխիքների, միջամտության ինտենսիվության, ծավալների և եղանակի առավել մանրամասն կանոնակարգման անհրաժեշտությունը:

Անվիճելի է Ս.Վ. Սոլգալովի այն դիրքորոշումը, որ 20-րդ դարի ընթացքում քաղաքակրթության ամենանշանակալից ձեռքբերումներից մեկը մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված պետական և միջազգային համակարգերի ամրապնդումն ու կատարելագործումն է[1]: Անհերքելի է, որ պետության բարոյական, կրոնական և իրավական զարգացվածության կարևորագույն ցուցիչներից է առհասարակ՝ մարդու իրավունքների և մասնավորապես՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության վիճակը:

21-րդ դարի սկզբին մարդու իրավունքների պաշտպանությունը ցանկացած զարգացած պետության գործունեության անխախտելի ուղղություններից է: Այն կանխորոշում է առաջին հերթին հանրային իշխանության մարմինների գործունեությունը: Այս իմաստով բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը: Դրա մասին է վկայում ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի պահանջը, որը և փաստացի սահմանում է հանրային իշխանության առաքելությունը[2]: Ավելին, ՀՀ նախագահը, հիմք ընդունելով սահմանադրական այդ պահանջը, 2012 թ. հոկտեմբերի 29-ին ստորագրեց «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը հաստատելու մասին» ՆԿ-159-Ն կարգադրությունը: Փաստաթղթի ներածությունում սահմանվեց, որ մարդու իրավունքների երաշխավորումը, ապահովումը և պաշտպանությունը ժողովրդավարական, իրավական պետության, քաղաքացիական հասարակության իրավաքաղաքական ու բարոյական առաջնահերթություններից են, սահմանադրական զարգացումների և պետական ու հանրային ինստիտուտների գործունեության առանցքը: Մարդու իրավունքների պաշտպանությունն

---

[1] Տե՛ս **Солгалов С.В.** Право на неприкосновенность частной жизни в системе конституционных прав и свобод человека и гражданина в Российской Федерации. http://xn--80aeeg4bq1dyc.xn--p1ai/pravo-na-neprikosnovennost-chastnoj-zhizni-v-sisteme-konstitucionnyx-prav-i-svobod-cheloveka-i-grazhdanina-v-rossijskoj-federacii/(19.02.2019):

[2] Տե՛ս **Մուրադյան Մ.Հ.** Մարդու իրավունքների տեսության հիմնահարցեր (մաս 1), Եր., 2016, էջ 48-49:

այն հիմնարար սկզբունքներից է, որոնց շնորհիվ ձևավորվում է պատշաճ վերաբերմունք ոչ միայն պետության, օրենքի, հասարակական կարգի, այլև քաղաքացիական հասարակության նկատմամբ, քանի որ վերջինիս հասունությունը և զարգացումն էապես կախված են մարդու իրավունքների պաշտպանվածության մակարդակից, մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուտների զարգացածության աստիճանից և փոխգործակցությունից: Հանրահայտ է, որ միայն մարդու իրավունքների և շահերի պաշտպանությամբ է հնարավոր զարգացնել քաղաքացիների կենսամակարդակը, նրանց կյանքի որակը, հետևաբար՝ հասնել ողջ պետության բարեկեցության բարձրացմանը:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետությունում հասարակական կյանքի տարբեր ոլորտներում իրականացվող բարեփոխումների պայմաններում ևս մարդու իրավունքների պաշտպանությունն առաջնահերթություն համարելը, մասնավորապես՝ հետազոտման առարկա հիմնական իրավունքի պարագայում, ժամանակի հրամայականն է: Այստեղ գերխնդիր է մարդու կենսագործունեության անձեռնմխելի շրջանակների, ինչպես նաև հանրային իշխանությունների կողմից անհատի անձնական կյանքին միջամտելու սահմանների ու հիմքերի որոշակիացումը:

Հարցի հետազոտման կարևորությունը նաև այն է, որ մեծ արագությամբ զարգացող հասարակական հարաբերությունների պայմաններում ավելանում են նաև հանրային իշխանության մարմինների կողմից մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիության ոլորտ միջամտությունների ծավալը, որոնք առերևույթ կարող են նույնիսկ արդարացվել հանրային իշխանության կողմից իրենց գործառույթների իրականացման ընթացքում իբր «անխուսափելի» բացասական ազդեցություններով:

Այս սուբյեկտիվ, հիմնական իրավունքի զարգացման, հետևաբար՝ պաշտպանության մակարդակը կարող է յուրօրինակ ցուցիչ լինել ընդհանրապես մարդու իրավունքներին ոչ իրավաչափ միջամտության ռիսկայնությունը նոր փոփոխությունների և կարգավորումների շրջանակներում գնահատելու համար:

Մարդու մասնավոր կյանքի ոլորտները, որտեղ այդ սուբյեկտիվ իրավունքի կրողն ապրում է և կարող է զարգացնել իր անհատականությունը, բազմազան են և մասամբ են ենթարկվում իրավական կարգավորման: Սա պայմանավորված է երկու հանգամանքով՝

1) բավականին դժվար է իրավունքի նորմերով կանոնակարգել միջանձնային այն հարաբերությունները, որոնք կառուցվում են ընկերության, սիրո, հարգանքի, ատելության զգացմունքների վրա,

2) իր բնույթով մարդը, հանրային նշանակություն ունեցող գործունեությունից (պետական ծառայություն, քաղաքական գործունեություն և այլն) զատ, հասարակությունից, պետությունից և այլ անձանցից որպես անհատ որոշակի անկախության կարիք ունի [1]:

Մարդն իրավունք ունի ինքնուրույն ընտրելու իր կյանքը, և ոչ ոք չի կարող նրան պարտադրել սեփական կենսաձևը, քանի որ մասնավոր կյանքի իրավունքը մարդու անձնական արժեքն է: Օրենքը միայն կարող է կանխորոշել որոշակի սահմաններ, որոնք բավականին տատանվող են: Այդ տատանումները կախված են շատ հանգամանքներից, օրինակ՝ տվյալ հասարակարգից, պետության ձևից, կառուցվածքից, քաղաքացիական հասարակության զարգացման և հասարակության իրավագիտակցության մակարդակից, բարոյականության և էթիկայի մասին հասարակության պատկերացումներից, տվյալ պատմական ժամանակահատվածում հասարակության մեջ մարդու տեղի և դերի գնահատականից: Այս հանգամանքներն ի-

[1] Տե՛ս **Кузахметова С.Е.** ФГОУ ВПО “Астраханский государственный технический университет”, г.Астрахань, Российская Федерация, Принцип неприкосновенности частной жизни (теоретико-правовой аспект) http://www.rusnauka.com/ONG_2006/Pravo/17749.rtf.htm (19.02.2019):

ոենց ազդեցությունն են ունենում օրենսդրի կամքի վրա և օրենսդրական գործառույթի միջոցով հաստատում համապարտադիր կանոններ: Օրինակ՝ Հնդկաստանում մինչ օրս մասնավոր կյանքը կանխորոշվում է կաստայական պահանջներով: Ճապոնիայի առանձին քաղաքներում համարում են, որ պետք է ապրել կիսաթափանց տներում, որպեսզի հարևանները կարողանան անընդհատ տեսնել, թե ինչով են զբաղվում մարդիկ և նրանց ընտանիքները[1]: Այլ կերպ՝ մասնավոր կյանքի մասին պատկերացումները տարբեր հասարակություններում տարբեր կերպ են ընկալվում: Մասնավոր կյանքի իրավունքի էությունն այն է, որ համոզմունքները, կենսաձևը, մարդու սեռական վարքը առանց վերջինիս կամքի չդառնան հասարակության սեփականությունը:

Հայտնի է, որ մարդու մասնավոր կյանքի նկատմամբ պետության վերաբերմունքը միշտ քաղաքական ռեժիմի մասին վկայող չափորոշիչ է եղել: Անձի մասնավոր կյանքին հանրային իշխանության կողմից չմիջամտելու պահանջը քաղաքացիական հասարակության սկզբունքներից է:

Պետք է նկատի ունենալ, որ մարդու իրավունքների, այդ թվում՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության ձևական հռչակումը բավարար չէ դրանք պաշտպանելու համար: Խորհրդային իշխանության երկարամյա փորձը, որի ժամանակ քաղաքացիների մասնավոր կյանք ներխուժելն ընդունված գործելաոճ էր՝ հատկապես այլակարծության «վտանգավոր» դեպքերը բացահայտելու նպատակով, մեզ հնարավորություն է տալիս արժանվույնս գնահատել այս իրավունքի և գործնականում նրա իրացվելիության կարևորությունը: Այնուամենայնիվ, այստեղ պետք է կարևորել նաև այն հանգամանքը, որ, ինչպես իրավացիորեն նշում է Ս.Վ.Սոլգալովը, ապրել հասարակության մեջ և հասարակությունից ազատ լինել անհնար է, և մարդու մեկուսացմանը սոցիալական հսկողության հակադարձումը հասարակական կյանքի անբաժան տարրն է[2]:

Կարելի է համարել, որ հասարակության մեջ անհատի կենսագործունեությունը բաժանվում է սկզբունքորեն տարբեր երկու հատվածների՝ մասնավոր կյանքի և հասարակական կյանքի: Սրանք մարդու կենսագործունեության երկու հակառակ ոլորտներն են, որոնք պետք է արդյունավետ համատեղվեն՝ ստեղծելով մեկ միասնություն: Հասարակական ակտիվ գործունեությամբ զբաղվելով՝ մարդն այնուամենայնիվ ձգտում է մեկուսացման: Որքան ակտիվ է նրա հասարակական կյանքը, այդքան մեծ է մասնավոր կյանք ներխուժելու պահանջը: Այդ պատճառով անհրաժեշտություն է առաջանում նվազագույնի հասցնել նրա կյանքի այս մեկուսի հատվածի նկատմամբ հսկողությունը: Այնուամենայնիվ, որքան բարդանում է հասարակական կյանքը, այդքան հետևողական է դառնում հսկողությունը, որի համար տրամադրվում են գիտատեխնիկական նվաճումները, մեթոդներն ու մեխանիզմները[3]:

Հեռախոսային խոսակցությունների վերահսկողությունը, տեսաձայնագրող սարքերով դիտարկումը, համակարգչային տեխնիկայի միջոցով մեծ ծավալի անձնական տեղեկատվություն հավաքելն ու վերլուծելը սոցիալական հսկողության այս ժամանակակից միջոցները, պատկերավոր ասած, մի մեծ դիտանցք են ստեղծում, որի միջով պետությունը հետևում է քաղաքացուն[4]:

Մարդու նկատմամբ չափազանց հետևողական, տոտալ հսկողությունը բերում է սոցիալական բացասական հետևանքների, որոնցից պաշտպանելուն է կոչված քննարկվող իրավունքը:

Հիմնահարցի միջազգային կարգավորվածության աստիճանը և ՄԻԵԴ-ի նախադեպային պրակտիկան: Մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավուն-

---

[1] Տե՛ս **Солгалов С.В.** նշվ. աշխ.:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս նույն տեղում:

քը վերպետական մակարդակով ամրագրվել է «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում» (1948թ.), «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայում (այսուհետ նաև՝ ՄԻԵԿ) (1950թ.), ապա իր զարգացումն է ստացել «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում (1966թ.):

Մարդու իրավունքների եվրոպական կոմիտեն իր թիվ 6825/74 արձանագրությամբ սահմանել է «Մասնավոր կյանքը հարգելու իրավունքն անձնական կյանքին միջամտելուց զերծ մնալու, սեփական կամքով կյանքը դասավորելու, անձնական կյանքի մասին տեղեկություններն օտար աչքից պաշտպանելու իրավունք է»[1]:

Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն (Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք)՝ «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք»[2]: Փաստորեն այդ հոդվածի պաշտպանության առարկան այս չորս իրավունքն է: Դրա բովանդակությունն աչքի է ընկնում իր յուրահատկությամբ: Մասնավորապես հոդվածի փաստակազմի հատկանիշների վերլուծությունից երևում է, որ իրավունքի կրողը (մասնավոր անձ) իրավունքի հասցեատիրոջից (հանրային իշխանություն) ակնկալում է չմիջամտել այդ իրավունքի պաշտպանության առարկային (բացառություն են 2-րդ մասով նախատեսված հիմքերը): Սակայն այս ամենը չի նշանակում, որ հանրային իշխանության պասիվությունը միշտ արդարացված է, քանզի կոնվենցիոն իրավունքի խախտում հնարավոր է ոչինչ չանելով: Ինչպես նշվում է իրավաբանական գրականության մեջ, հոդվածից բխում են պաշտպանություն և երաշխիքներ ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունները[3]:

Ինչ վերաբերում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին, ապա այնտեղ ամրագրվել է մարդու անձնական և ընտանեկան կյանքին կամայական միջամտելու, բնակարանի անձեռնմխելիության և նամակագրության գաղտնիության նկատմամբ անհիմն ոտնձգելու արգելքը: Միաժամանակ նախատեսվել է միջամտությունից և ոտնձգությունից պաշտպանվելու մարդու անօտարելի իրավունքը[4]:

Սոցիալապես խոցելի անձանց իրավունքների պաշտպանության համար մեծ նշանակություն ունի 2006 թ. Հաշմանդամների իրավունքների կոնվենցիան, որի 22-րդ հոդվածը ոչ միայն ամրագրեց հաշմանդամների մասնավոր կյանքի անձեռնմխելիության և պաշտպանության իրավունքը, այլ նաև հոդվածի 2-րդ մասում պարտավորեցնում է մասնակից պետությանը պահպանել հաշմանդամի անձնական և առողջական վիճակի մասին տեղեկությունների գաղտնիությունը: Կոնվենցիայի 31-րդ հոդվածը մասնակից պետություններին միաժամանակ պարտավորեցնում է պարբերաբար հավաքել անհրաժեշտ տեղեկատվություն, ներառյալ՝ վիճակագրական ու հետազոտական տվյալներ, որոնք հնարավորություն կտան մշակելու ու իրականացնելու Կոնվենցիան կիրարկելու համար անհրաժեշտ քաղաքականութ-

---

[1] Տե՛ս **Лебедев В.** Судебная власть и средства массовой информации: теория вопроса и практика взаимоотношений // Российская юстиция. 1999. N12 . էջ 2:

[2] Տե՛ս «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիա՝ փոփոխված 11-րդ արձանագրությամբ (4-ը նոյեմբերի, 1950 թ., Հռոմ), https://www.arlis.am/documentView.aspx?docID=20870 (18.02.2019):

[3] Տե՛ս **Հովհաննիսյան Գ., Ղամբարյան Ա., Սարգսյան Ա.** Մասնավոր անձի կատարած գաղտնի տեսագրության կամ ձայնագրության օգտագործման թույլատրելիությունը քրեական և քաղաքացիական դատավարությունում.- Եր.: «ՎՄԿ-ՊՐԻՆՏ» հրատ., 2017. էջ 14, Lingens v Austria, A 103 (1986), 8 EHRR 407, §37 PC, Plattform "Ärzte für das Leben" (Doctors for the Right to Life) v. Austria, 5/1987/128/179, 1988.

[4] Տե՛ս Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, Ընդունվել և հռչակվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1948 թվականի դեկտեմբերի 10-ի 217 Ա (III) բանաձևի համաձայն, https://www.arlis.am/documentview.aspx?docID=1896 (18.02.2019):

յուն: Ընդ որում, այդ տեղեկատվության հավաքման ու պահպանման գործընթացը պետք է համապատասխանի օրենքով սահմանված երաշխիքներին, ներառյալ՝ տվյալների պաշտպանության մասին օրենսդրությանը, որը կապահովի հաշմանդամություն ունեցող անձանց անձնական կյանքի գաղտնիությունը և հարգանքը նրա նկատմամբ[1]:

Ինչպես նշվել է, մասնավոր կյանքի ոլորտը բավականին լայն է[2], ինչը բարդություններ է ստեղծում քննարկվող իրավունքի պաշտպանության առարկայի որոշակիացման հարցում:

Քննարկվող հիմնական իրավունքի պաշտպանության առարկայի լայն լինելու օգտին է վկայում նաև ՄԻԵԴ-ի նախադեպային պրակտիկան: Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին առաջին անգամ ՄԻԵԴ-ն անդրադարձել է 1968թ. քննված գործով, որը վերաբերում էր Բելգիայում ֆրանսախոս ծնողների երեխաների ֆրանսերեն կրթություն ստանալու իրավունքին: Ի սկզբանե ընդգծելով, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածն ուղղված չէ կրթության իրավունքի երաշխավորմանը, քանզի այն հիմնականում մարդու անձնական և ընտանեկան կյանքին հանրային իշխանությունների անհիմն միջամտությունից անձի պաշտպանությունը երաշխավորող գործառույթ ունի, ՄԻԵԴ-ն այնուամենայնիվ կարևորեց, որ չպետք է բացառել, որ կրթության ոլորտում կիրառվող միջոցները կարող են ազդեցություն ունենալ կամ շեղվել մասնավոր և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքից: Սա տեղի կունենա այն դեպքում, երբ, օրինակ, այդ միջոցների նպատակը կամ դրանց հետևանքը լինի մասնավոր կամ ընտանեկան կյանքի չհիմնավորված միջամտությունը, (inter alia) երեխաներին ծնողներից կամայական բաժանումը[3]:

Այսպիսով, Եվրոպական դատարանը հենց սկզբից արտահայտել է այն դիրքորոշումը, որ մասնավոր կյանքի իրավունքը չպետք է նույնացվի միայն դրա կամայական հանրայնացումից զերծ պահելու իրավունքի հետ, և պետք է լայն մեկնաբանություն տրվի դրան՝ առարկայի մեջ ընդգրկելով նաև մասնավոր կյանքն անհիմն միջամտությունից պաշտպանելու իրավունքը:

Հետագայում Ռեկյավիկում շների խնամքի վերաբերյալ գործով մարդու իրավունքների հանձնաժողովը պարզաբանեց, որ մասնավոր կյանքի իրավունքը չի ավարտվում դրա գաղտնիության պաշտպանությամբ. այն նախատեսում է նաև այլ անձանց հետ հարաբերություններ հաստատելու և զարգացնելու, այդ եղանակով որպես անձ ձևավորվելու մարդու իրավունքը[4]: Կոնվենցիայի 8-րդ հոդվածի նման մեկնաբանությունը լայն հնարավորություն ընձեռեց բոլորովին նոր հայացք գցելու մասնավոր կյանքի երաշխիքների սահմանների վրա: Եվրոպական դատարանը «մասնավոր կյանքի» նման մեկնաբանությանը հավանություն տվեց նաև Նիեմիցն ընդեմ Գերմանիայի գործով՝ ընդգծելով, որ խիստ սահմանափակ կլիներ մոտեցումը, եթե «մասնավոր կյանք» հասկացությունը նույնացվեր միայն «ներքին հարաբերությունների հետ», որտեղ մարդը կարող է իր ցանկությամբ վարել իր անձնական կյանքը. դրանով դատարանը բացառեց արտաքին աշխարհի հետ նրա հարաբերությունների պաշտպանության հնարավորությունը: Մասնավոր կյանքի ինստիտուտը պետք է պաշտպանի նաև այլ մարդկանց հետ հարաբերություններ հաստա-

---

[1] Տե՛ս «Конвенция о правах инвалидов» (Заключена в г. Нью-Йорке 13.12.2006) // СПС КонсультантПлюс (http://www.un.am/res/UN%20Treaties/III_15.pdf).

[2] Տե՛ս Klass and Others v. Germay, A 28 (1978), 2 EHRR 2014, PC: Association for European Integration and Human Right and Ekimdzhiev v. Bulgaria, HUDOC (2007). S.H. and others v. Austria: Costa and Pavan v. Italy, HUDOC (2012), Evans v. UK, 2007- I, 46 EHRR 728, GC.

[3] Տե՛ս Право Европейской конвенции по правам человека / Харрис, О'Бойл и Уорбрик; - Науч. Издание . – М.: Развитие правовых систем, 2016. էջ 708:

[4] Տե՛ս X v. Iceland, № 6825/74, 5 DR 86,88 (1976). հատկանշական է, որ Մարդու իրավունքների հանձնաժողովը ընդգծել է՝ մարդու կապը շան հետ չի եղել բավարար ինտենսիվ՝ հարցը մասնավոր կյանքի տիրույթում դիտարկելու համար:

տելու և զարգացնելու իրավունքը[1]: Դատարանը հաստատեց՝ պարտադիր չէ, որ հարաբերությունները անձնական բնույթի լինեն: Այս իմաստով Նիեմիցն ընդեմ Գերմանիայի գործը հենց վերաբերում էր փաստաբանի գրասենյակի խուզարկությանը, և հաստատվեց, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածը պետք է կիրառվի՝ անկախ հարաբերությունների գործնական բնույթից: Արդյունքում Կոնվենցիայի 8-րդ հոդվածի ազդեցության տիրույթում հայտնվեցին բոլոր այն բողոքները, որոնցում դիմումատուն ապացուցում էր, որ իր և շրջապատող անձանց փոխհարաբերությունների վրա տեղի է ունեցել անհիմն ազդեցություն, միջամտություն[2]:

Հատկանշական է, որ ՄԻԵԴ-ը մասնավոր կյանքի պաշտպանության ծավալի գնահատման տիրույթ է բերել նաև ֆիզիկական և բարոյական անձեռնմխելիության իրավունքը: Մասնավորապես հոգեկան հիվանդ կանանց նկատմամբ սեռական ոտնձգությունների վերաբերյալ գործի շրջանակներում դատարանն ընդգծեց, որ մասնավոր կյանքի իրավունքը ներառում է նաև անձի ֆիզիկական և բարոյական անձեռնմխելիության պաշտպանության տիրույթը[3]:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի բովանդակության որոշակիացման հարցում կառուցողական են նաև ՄԻԵԴ-ի իրավական դիրքորոշումները՝ կապված «ընտանեկան կյանք» հասկացության էության լուսաբանման հետ:

Պետք չէ մոռանալ, որ մասնավոր կյանքի անձեռնմխելության իրավունքը մեծ դեր ունի ընտանեկան հարաբերություններում: Ընտանիքը պետության և հասարակության առաջնային կարևորագույն բջիջն է: Հիմնահարցն այս տեսանկյունից դիտարկելու պարագայում ընտանեկան կյանքի պաշտպանությունն առանձնակի նշանակություն է ստանում հենց հասարակության, հանրային իշխանության և վերջիններիս միջև հարաբերությունների որակական կատարելագործման առումով:

Պետության կողմից ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքը ենթադրում է ընտանական հարաբերություններին պետական մարմինների կամայականորեն միջամտելու բացառում: Արգելվում են ընտանեկան հարաբերությունները խոչընդոտող ապօրինի միջամտությունները՝ շփման արգելք, բռնի բաժանում, ընտանեկան կյանքի մանրամասնությունների հրապարակում և այլն: Այս իրավունքի խախտումը պետք է հանգեցնի պատասխանատվության, այդ թվում՝ նյութահիրավական: Ընտանեկան կյանքը հարգելն սկզբունքային է ցանկացած պետության համար, քանի որ ընտանիքի դերն ու նշանակությունը հասարակության և պետության կայացման հարցում թերագնահատել իրավունք չունի ոչ մի պետություն: Հասարակական հարաբերությունների զարգացման տարբեր փուլերում ընտանիքի պաշտպանության գործառույթը ինչպես որակական, այնպես էլ գործիքակազմի առումով փոփոխությունների է ենթարկվել, որոնք ազդել են նաև կարգավորման պատկերացումների վրա:

Այս իմաստով ՄԻԵԴ-ի նախադեպային իրավաստեղծ գործունեության վրա հասարակական հարաբերությունների զարգացման ազդեցության լավ օրինակ է միասեռականների պաշտպանության նկատմամբ մոտեցումը: Մարդու իրավունքների հանձնաժողովը և ՄԻԵԴ-ը տևական ժամանակ այն դիրքորոշումն ունեին, որ միասեռականների հուզական և սեռական հարաբերությունները մտնում են «անձնական կյանքի» հասկացության մեջ: Սակայն միաժամանակ նրանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի էվոլուցիայի շնորհիվ դրանք դիտարկվում են նաև «ընտանեկան կյանք» հասկացության տիրույթում[4]:

Վերլուծելով «ընտանեկան կյանք» հասկացության բովանդակությունը՝ ՄԻԵԴ-ը այն գնահատել է նաև ամուսնական կապերի և ծնող-երեխա հարաբերությունների

---

[1] Տե՛ս Niemietz v. Germany A 251 –B (1992), 16 EHRR 97, § 29:
[2] Տե՛ս Molka v. Poland, № 56550/00, 2006-IV, DA:
[3] Տե՛ս Castello – Roberts v. UK, A 247-C (1993), 19 EHRR 112:
[4] Տե՛ս P.B. and J.S. v. Austria, HUDOC (2010) 55 EHRR 926:

լույսի ներքո: Մասնավորապես ընդգծվում է, որ երեխաները, որոնք ծնվում են ամուսնական կապերի արդյունքում (ispo jure) ծնողների հարաբերությունների մաս են, ուստի անհրաժեշտ է դա գնահատել «ընտանեկան կյանք» հասկացության տիրույթում[1]: Նույնը վերաբերում է նաև այն անձանց և իրենց երեխաներին, որոնք ապրում են առանց ամուսնական կապերի[2]: Ինչ վերաբերում է ամուսնալուծված զույգերի և վերջիններիս ու իրենց երեխաների միջև հարաբերությունների գնահատմանը «ընտանեկան կյանք» հասկացության լույսի ներքո, ապա ՄԻԵԴ-ը այս պարագայում արձանագրել է իրավական տարբերակված դիրքորոշում: Նման իրավիճակներում մոր և երեխայի միջև ընտանեկան կապերը ՄԻԵԴ-ը գնահատում է երեխայի ծնվելու պահից և դրա ուժով[3]: Սակայն ամուսնալուծված հոր պարագայում ՄԻԵԴ-ը խնդիր է տեսնում անձերի հարաբերությունները «ընտանեկան կյանք» հասկացության լույսի ներքո գնահատելու հարցում[4]: Մասնավորապես ընդգծվում է, որ բիոլոգիական պարզ կապերը, առանց որևէ փաստական կամ իրավաբանական հանգամանքների[5], որոնք կվկայեն ամուսնալուծությունից հետո սերտ կապերի մասին, չեն կարող գնահատվել «ընտանեկան կյանք» հասկացության տիրույթում[6]: ՄԻԵԴ-ը, փորձելով ամեն կերպ տարանջատել «անձնական կյանք» և «ընտանեկան կյանք» հասկացությունները, ամեն դեպքում ընդունում է, որ առանձին դեպքերում դա հնարավոր չէ, ինչը և հաստատում է Դիկսոնն ընդդեմ Մեծ Բրիտանիայի ու Ս. Հ. և այլք ընդդեմ Ավստրիայի գործերով, որտեղ Դատարանն ընդգծում է, որ անձերի՝ բիոլոգիական ծնողներ դառնալու ցանկությունը և որոշումն ինչպես «անձնական կյանք», այնպես էլ «ընտանեկան կյանք» հասկացությունների տիրույթում են:

Հատկանշական է, որ բնակության համար նախատեսված վայրը, մասնավորապես այնտեղ ծավալվող հարաբերությունները, ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքը ևս գնահատում է մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության առարկայի շրջանակներում: Նման հետևության կարելի է հանգել՝ հատկապես հաշվի առնելով ՄԻԵԴ-ի դիրքորոշումներով ձևավորված այն պրակտիկան, որ բնակարանն այն տեղն է, որտեղ մարդն ապրում է մշտապես, և սովորաբար դա այն վայրն է, որտեղ անցնում է անձնական և ընտանեկան կյանքը[7], հանգիստը, ընկերներին և կոլեգաներին է ընդունում, և որևէ նշանակություն չունի՝ անձը տվյալ բնակարանի սեփականատե՞ր է, թե՞ այնտեղ բնակվում է վարձակալական հիմունքներով,[8] կամ այն տրամադրվել է անձին ծառայողական պարտականությունների կատարման հիմքով[9]:

Ինչ վերաբերում է հաղորդակցության գաղտնիությանը՝ որպես մասնավոր կյանքի անձեռնմխելության իրավունքի տիրույթում գտնվող պաշտպանության ենթակա ոլորտ, ապա այստեղ ևս ՄԻԵԴ-ի նախադեպային պրակտիկան, կարելի է արձանագրել, որոշակի է: Հատկանշական է, որ այստեղ Դատարանն էական չի համարում հաղորդակցության ձևը և (կամ) բովանդակությունը[10]:

---

[1] Տե՛ս Berrehab v. Netherlands, A 138 (1988), 11 EHRR 322, § 21:
[2] Տե՛ս Johnston and Others v. Ireland, A 112 (1986) 9 EHRR 203, PC:
[3] Տե՛ս Marckx v. Belgium, A 31 (1979), 2 EHRR 330, PC; Kearns v. France, HUDOC (2008), 50 EHRR 851:
[4] Տե՛ս Robertson A.H., Privacy and Human Rights, 1973. P. 183-189:
[5] Հատկանաշական է, որ ՄԻԵԴ-ը որպես նման հանգամանքներ դիտարկում է ակնհայտ հետաքրքրությունը երեխայի նկատմամբ մինչև ծնվելը և հետո, ալիմենտ վճարելու պատրաստակամությունը և փաստը: Այս մասին մանրամասն տե՛ս Boughanemi v. France, 1996-II, 22 EHRR 228; Nylund v. Finland, № 27110/95, 1999 – VI, DA:
[6] Տե՛ս G. v. Netherlands, № 16944/90, 16 EHRR CD 38 (1993):
[7] Տե՛ս Giacomelli v. Italy, 2006-XII, 45 EHRR 871:
[8] Տե՛ս Larkos v. Cyprus, 1999-I, 30 EHRR 597, GC; McCann v. UK, HUDOC (2008) and others:
[9] Տե՛ս Cvijetic v. Croatia, HUDOC (2004):
[10] Տե՛ս Michaud v. France, HUDOC (2012):

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի էությունը: Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի առանցքն ազատության իրավունքն է: Մարդու իրավունքների և ազատությունների պատմական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս ինստիտուտը ձևավորվել է մի շարք պատճառների ազդեցությամբ, որոնք պայմանավորված են եղել սեփական կյանքի բնույթն ազատ որոշելու մարդու հոգեբանական պահանջմունքով՝ խղճի ազատության, զբաղմունքի, բնակության վայրի ընտրության, ընտանիք կազմելու և այլ ազատություններով, ինչպես նաև հասարակության տնտեսական, քաղաքական, կրոնական և այլ ուղղություններով զարգացման պայմաններով[1]:

Հատկաշական է, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ միասնական բնորոշում բացակայում է[2]: Եթե փորձենք համակարգել հիմնահարցին առնչվող դիրքորոշումները, ապա պետք է արձանագրել, որ ընդհանուր մոտեցումը հետևյալն է, որ այն անձի, նրա ընտանիքի, բնակարանի վերաբերյալ տեղեկատվությունը վերահսկելու և դրանց հրապարակմանը, դրանց նկատմամբ ոտնձգություններին, ինչպես նաև անձի պատվի և հեղինակության դեմ ուղղված ոտնձգություններին դիմակայելու մարդուն տրված հնարավորություն է[3]: Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը դասվում է անձնական իրավունքների շարքին: Յուրաքանչյուրն այդ իրավունքով օժտված է ի ծնե, և պետությունները պարտավոր են ձեռնպահ մնալ այդ անձնական ազատության ոլորտին ապօրինի միջամտելուց[4]: Մասնավոր կյանքի պաշտպանության մասին խոսելիս հիմնականում օգտագործվում են երկու հասկացություններ՝ «անձեռնմխելիություն» և «գաղտնիք»: Այս տրամաբանությամբ էլ կառուցված են ժամանակակից սահմանադրությունները:

Հատկանշական է, որ ի տարբերություն 2005 թվականի ՀՀ սահմանադրության տեքստի, որի 23-րդ հոդվածով պաշտպանվող արժեքների շրջանակը սահմանափակված էր միայն մասնավոր և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի պահանջի իրավունքով, 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում «Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը» վերնագրով 31-րդ հոդվածի պաշտպանության առարկան ընդլայնվեց, և, բացի մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքից, որպես պաշտպանության ենթակա արժեքներ, առանձին հոդվածով սահմանվեցին նաև անձի պատիվն ու բարի համբավը: Նկատենք, որ սահմանադրական կարգավորման մակարդակում հիմնահարցի վերաբերյալ համարժեք լուծումներ նախատեսված են նաև եվրոպական առանձին պետություններում[5] (Էստոնիայի Սահմանադրության 17-րդ հոդված, Հունաստանի Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մաս, Հունգարիայի Սահմանադրության 6-րդ հոդված, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 23-րդ հոդվածի 1-ին մաս): Քննարկվող հիմնական իրավունքների սահմանադրաիրավական ծավալը գնահատելու համար անհրաժեշտ է նաև ընդգծել վերջինիս պաշտպանությունն ապահովող օրենսդրական կարգավորումները: Մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 144-րդ հոդվածը քրեական պա-

---

[1] Տե՛ս **Кузахметова С.Е.** Принцип неприкосновенности частной жизни (теоретико-правовой аспект), ФГОУ ВПО “Астраханский государственный технический университет”, г.Астрахань, Российская Федерация, http://www.rusnauka.com/ONG_2006/Pravo/17749.rtf.htm:

[2] Տե՛ս Meyer-Ladewig / Nettesheim, in: dies. / von Raumer, EMRK, 4. Aufl., Baden-Baden 2017, Art. 8 Rn. 7:

[3] Տե՛ս **Ковалев А.А.** Международная защита прав человека: учебное пособие. М.: Статут, 2013. էջ108:

[4] Տե՛ս Международная и внутригосударственная защита прав человека: учебник / А.Х. Абашидзе, З.Г. Алиев, К.Ф. Амиров и др.; под ред. Р.М. Валеева. М.: Статут, 2011. էջ126:

[5] Տե՛ս Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը.-Եր.: Տիգրան Մեծ, 2016, էջ 52-53:

տասխանատվություն է նախատեսում անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելու, պահելու, օգտագործելու կամ տարածելու, 146-րդը՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումների գաղտնիությունը խախտելու, 147-րդը՝ բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու համար: Անհրաժեշտ է կարևորել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում առկա հիմնահարցին առնչվող վարույթային կարգավորումները: Մասնավորապես՝ նույն օրենսգրքի 12-րդ հոդվածը սահմանում է յուրաքանչյուրի բնակարանի անձեռնմխելիության իրավունքը և այդ իրավունքին միջամտության դատավարական կանոնները:

Խնդիրն իր լուծումներն է ստացել նաև մասնավոր իրավունքի ոլորտում: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը երաշխավորում է ոչ նյութական բարիքներ ճանաչված մասնավոր կյանքի անձեռնմխելիության, անձնական ու ընտանեկան կյանքի գաղտնիության քաղաքացիաիրավական պաշտպանությունը (հոդված 162-րդ): Այս իմաստով անհրաժեշտ է հիշատակել նաև ՀՀ ընտանեկան օրենսգրքի 12-րդ (Ամուսնացող անձանց բժշկական հետազոտությունը)[1], 128-րդ (Երեխայի որդեգրման գաղտնիքը), «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 20[1]-րդ[2], ՀՀ աշխատանքային օրենսգրքի 132-րդ (Աշխատողի անձնական տվյալների մշակման ներկայացվող ընդհանուր պահանջները և այդ տվյալների պաշտպանության երաշխիքները) հոդվածները:

Համակարգելով հիմնահարցին առնչվող իրավաբանական գրականության մեջ առկա սույն աշխատանքի շրջանակներում հիշատակված մոտեցումները, սահմանադրական և օրենսդրական կարգավորումների ներկա ծավալը և հատկապես մեր կողմից ելակետային համարվող ՄԻԵԴ-ի նախադեպային պրակտիկան՝ կարելի է արձանագրել, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության առարկան ներառում է՝

(1) անձի սեփական կյանքի բնույթի ընտրության ազատության շրջանակները,

(2) մարդու ոչ պաշտոնական շփումների շրջանակը: Տվյալ դեպքում մարդն ինքնուրույն է որոշում, թե ում հետ հաղորդակից լինի կամ ում հետ խզի իր կապերը,

(3) մասնավոր կյանքի գաղտնիքի իրավունքը (անձնական, ընտանեկան գաղտնիք, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, այլ հաղորդումների գաղտնիք, կրոնի ընտրության, եկեղեցական խոստովանության, բժշկական, փաստաբանական, նոտարական, նախաքննական, հարկային, բանկային, առևտրային և այլ գաղտնիքներ),

(4) անձնական տվյալների պաշտպանության շրջանակները (անձի վերաբերյալ տեղեկատվության հավաքում, վերլուծություն, օգտագործում),

(5) բնակարանի անձեռնմխելիության պաշտպանության իրավունքը,

(6) անձի ազատ զարգացման իրավունքը (պատվի, արժանապատվության, գործարար համբավի, ազգային պատկանելության, մայրենի լեզվով հանդես գալու, շփման լեզվի ազատ ընտրության, խղճի, դաստիարակության, ուսման, մշակութային գործունեության, ձեռնարկատիրության ազատության իրավունքները):

Այսպիսով, իրավունքի զարգացման ժամանակակից փուլում խնդիրը ոչ այնքան հիմնահարցի վերաբերյալ մեկ միասնական դեֆինիցիա ունենալն է, այլ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ծավալը ճիշտ գնահատելը: Այս առումով մի բան պարզ է. հիմնախնդրի շրջանակներում անհրաժեշտաբար պետք է

---

[1] Հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ամուսնացող անձի հետազոտության արդյունքները համարվում են բժշկական գաղտնիք: Այդ արդյունքները հետազոտություն անցած անձի համաձայնությամբ կարող են հաղորդվել այն անձին, որի հետ նա մտադիր է ամուսնանալ»:

[2] Հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պետությունը ճանաչում է խոստովանության գաղտնիությունը»:

գնահատվեն անձի ինքնորոշման իրավունքի, նրա ֆիզիկական և բարոյական անձեռնմխելիության ինքնավարության, այլ անձանց հետ կապերի հարցերը, որոնք սկզբունքային նշանակություն ունեն մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության առարկային՝ հանրային իշխանության մարմինների միջամտության սահմաններն ուրվագծելու տեսանկյունից:

СОДЕРЖАНИЕ И СУЩНОСТЬ ОСНОВНОГО ПРАВА НА НЕПРИКОСНОВЕННОСТЬ ЧАСТНОЙ ЖИЗНИ

Мушег Бабаян
Начальник Образовательного комплекса Полиции РА

Статья посвящена изучению сущности конституционного права личности на неприкосновенность частной жизни. В работе представлены позиции разных ученых относительно понятия данного основного права. Автором анализируются международные правовые акты и действующее армянское законодательство, регулирующее отношения в сфере защиты информации о частной жизни. Основываясь на позиции ЕСПЧ и национального законодательства, автором выявлен предмет защиты рассматриваемого права.

THE ESSENCE OF THE FUNDAMENTAL RIGHT TO INVIOLABILITY OF PRIVATE LIFE

Mushegh Babayan
Head of Educational Complex of Police of RA

This article is aimed at discussing the essence of the constitutional right of a person on Inviolability of Private Life. The positions of different scientists regarding to mentioned fundamental right is also presented in the article. International legal acts and current Armenian legislation regulating relations in the field of protection of information about private life are also analyzed by the author. The author has identified the subject of protection of the alleged right based on the position of the ECHR and National legislation.

Բանալի բառեր- սուբյեկտիվ իրավունք, մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունք, մասնավոր կյանքի մասին տեղեկատվության պաշտպանության ոլորտ, պաշտպանության առարկա
Ключевые слова: субъективное право, права на неприкосновенность частной жизни, сфера защиты информации о частной жизни, предмет защиты
Key words: right to Inviolability of Private Life, constitutional right, fundamental right, subject of protection, inviolability